ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնք
գ. Կարմիր Աղեկ, փողոց 2, տուն 19, հեռ. 091929305
էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am
,, 02,, դեկտեմբերի 2015թ. թիվ 02/12-1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ուղարկում Կարմիր Աղեկ համայնքի ավագանու 2015թ. նոյեմբերի 30-ի թիվ 14-18 որոշումներն առդիր ինը էջով:

Համայնքի ղեկավար՝ /Վ. Հովհաննիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» նոյեմբերի 2015 թվականի N14

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Կարմիր Աղեկ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի “Սոցիալական հատուկ արտոնություններ” 10.3.1 գործառական դասակարգման “Հարազատին կորցրած անձիք” 4729 հոդվածից Մարտուն Սաղաթելի Մոսինյանին հատկացնել դրամական օգնություն 25000 /քսանհինգ հազար/ դրամի չափով:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Հովհաննիսյան Վահե Վաչագանի			
5	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Վ. Հովհաննիսյան/

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

30 նոյեմբերի 2015թվական
գ. Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"30" նոյեմբերի 2015 թվականի N 15

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29 կետով՝

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշեց

1. Հաստատել Կարմիր Աղեկ համայնքի համայնքային սեփականության 2015 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Հովհաննիսյան Վահե Վաչագանի			
5	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Վ. Հովհաննիսյան/
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

30 նոյեմբերի 2015թվական
գ. Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

"30" նոյեմբերի 2015 թվականի թիվ 16-Ն

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի « ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3 կետով, "Բյուջետային համակարգի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու "Կարմիր Աղեկ համայնքի 2015թ. բյուջեն հաստատելու մասին" 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1.1 ա/ եկամուտներն ավելացնել 3.0 հազ.դրամով՝ սահմանելով 5952.0 հազ. դրամ

բ/ ծախսերն ավելացնել 3.0 հազ.դրամով՝ սահմանելով 5952.0 հազ. դրամ

1.2 Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիան ավելացնել 3.0 հազ.դրամով և այն սահմանել 446.6 հազ. դրամ:

1.3 2015թ. բյուջեով նախատեսված կառավարման ապարատի 4587.0 հազ.դրամն ավելացնել 106.1 հազ. դրամով և այն սահմանել 4693.1 հազ. դրամ:

1.4 2015թ. բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի 300.0 հազ.դրամը պակասեցնել 153.1 հազ.դրամով դրամով և այն սահմանել 146.9 հազ. դրամ:

1.5 2015թ. բյուջեով նախատեսված սոցիալական պաշտպանության 100.0 հազ.դրամն ավելացնել 50.0 հազ. դրամով և այն սահմանել 150.0 հազ. դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Հովհաննիսյան Վահե Վաչագանի			
5	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

Համայնքի ղեկավար՝ /Վ. Հովհաննիսյան/

,, 30 ,, նոյեմբերի 2015թ.
գ. Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"30" նոյեմբերի 2015 թվականի N 17-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, "Տեղական տուրքերի ու վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Հովհաննիսյան Վահե Վաչագանի			
5	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Վ. Հովհաննիսյան/

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

30 նոյեմբերի 2015 թվական
Գյուղ Կարմիր Աղեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանու
2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 17-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5 000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

բ) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

բդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 000 /երկու հազար/ ՀՀ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի

գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2 000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝ 1 500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամյակի համար 1 500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

3) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000/հիսուն հազար/ ՀՀ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3 000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

13 . Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել 1 000 /մեկ հազար/ ՀՀ դրամ.

Համայնքի ղեկավար՝ /Վ. Հովհաննիսյան/

30 նոյեմբերի 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"30" նոյեմբերի 2015 թվականի N 18-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ ու 26-րդ կետերով և "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ ու 72-րդ հոդվածներով՝

Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 27-ի "Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին" N 23-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

NN	Ազգանուն անուն հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Աբրահամյան Շիրազ Արտավազդի			
2	Ալեքսանյան Արարատ Վանիչկայի			
3	Հովհաննիսյան Գագիկ Սերգոյի			
4	Հովհաննիսյան Վահե Վաչագանի			
5	Մելիքսեթյան Ալբերտ Անդրանիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Վ. Հովհաննիսյան/
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

30 նոյեմբերի 2015 թվական
Գյուղ Կարմիր Աղեկ

Հավելված
Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանու
20 15 թվականի նոյեմբերի 30-ի N 18-Ա որոշման

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՁԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 3:
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	123 000
Աշխատակազմի քարտուղար	1	100 000
Աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ	1	90 000

Համայնքի ղեկավար՝ _____ /Վ. Հովհաննիսյան/
ստորագրություն անուն, ազգանուն